372
Թ-12

„Մշակի" թմբարարան
0.120-10

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻ

ՀԱՅՈՑ Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

„ԽՐԻՄԵԱՆ"

ԵՐԿԱԵՌ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

1911—12 ուսումն. տարւոյ համար։

Տպարան Մալխասեանցի Ալէքսանդրապօլ
1912

17.04.2013
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Խ.Հ. Публичная Библиотека
7/XI 1922
Имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻ ԱՆՎԱՆ
370
2999-ՏԵ
1004/1573

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻ

ՀԱՅՈՑ Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

„ԽՐԻՄԵԱՆ“

ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

1911—12 ուսումն. տարւայ համար։

Տպարան Մալխասեանցի Ալէքսանդրապօլ։
1912

50.322

1911—12 ուս. տարում Ալէքսանդրապոլի «Խրիմեան» ծխական երկսեռ դպրոցը ունեցել է ընդամենը չորս բաժանմունք՝ I զուգընթաց, I հիմնական, II և III բաժ.։

Ուսուցչական կազմը բաղկացած էր վեց հոգուց։ Այդ կազմից աւագ ուսուցիչ Ս. Թարաղեանը աւարտել է ուսուցչական սէմինարիա և ունի բաւական տարւայ փորձառութիւն։

Ուսուցիչներ՝ Ե. Յարութիւնեանը աւարտել է քաղաքային դպրոց, ունի ուսուցչական ցէնզ և տասներկու տարւայ փորձառութիւն։

Տիկին Մ. Յարութիւնեանը աւարտել է Տփխիսի III իգական գիմնազիայի ութերորդ դասարանը և ունի երեք տարւայ փորձառութիւն։

Ե. Մելիք-Փարսադանեանը սովորել է ըէալական դպրոցում, ունի ուսուցչական ցէնզ և տասնեվեց տարւայ փորձառութիւն։

Գ. Բրուտեանը աւարտել է քաղաքային դպրոցը, ունի ուսուցչական ցէնզ և երկու տարւայ փորձառութիւն։

Տ. Մանուկեանը աւարտել է ճեմարանը և ունի մէ տարւայ փորձառութիւն։

Դպրոցում աշխատանքները սկսել են սեպտեմբերի սկզբից և վերջացել մայիսի վերջին։ Սկզբներում ուսուցչական կազմը գրաւել է մի շարք դպրոցական նախա-

պատրաստական հարցերով, որպիսիներն են՝ ձեռնարկների, դաստիարակների և նրանց պարտականությունների մասին, դասարաշխումը, դասերի և դասամիջոցների տեղությունը, ուսման պիտոյքների հայթայթման ձևը և սրանց նման մի շարք հարցերով։ Սեպտեմբերի 3-ից սկսել են կանոնաւոր դասերը. դպրոցական պարապմունքների հետ զուգընթացաբար ուսումնական տարւայ ընթացքում եղել են ժողովներ մանկավարժական, հողարարձական և խառը, ծնողական, դպրոցական հանդէսներ և զբօսանքներ։

Տարւայ սկզբին դպրոցը ունեցաւ 161 աշակերտ-աշակերտուհիներ, որոնք տեղաւորուեցին չորս բաժանմունքներում հետևեալ կարգով՝

I հիմն.—33, I զուգընթ.—49, II բաժ.—49, և III բաժ. 30 աշակերտներ։

1911-12 ուս. տարում դպրոցում աւանդւում էր շաբաթական 92 դաս հետևեալ առարկաներից՝ հայոց լեզու 6-ական դաս բոլոր բաժ.—24 դաս, իրաղննութիւն 2-ական դաս I և II բաժ.—6 դաս. Ռուսաց լեզու 6-ական դաս II և III բաժ.—12 դաս. Թւաբանութիւն 5-ական դաս բոլոր բաժ.—20 դաս, Կրօն—2-ական դաս բոլոր բաժ.—8 դաս, Բնագիտութիւն III բաժ.—3 դաս, հայրենագիտութիւն III բաժ.—4 դաս, երաժշտութիւն—2-ական դաս բոլոր բաժ.—8 դաս, նկարչութիւն 2-ական դաս բոլոր բաժ. և մի դաս III բաժնում—7 դաս.

Ուսուցիչ-ուսուցչուհիները աւանդում էին շաբաթական՝

1. Ս. Թարաղեան—20 դաս. (Ռուս. լ., կրօն, բընագիտութիւն, հայ. լ. և իրաղննութ.)

2. Մ. Յարութիւնեան—11 դաս. (Ռուս. լ., և թւաբանութիւն)

3. Ե. Յարութիւնեան 22 դաս. (Հայոց լեզու, իրաղննութիւն, թւաբանութիւն և կրօն.)

4. Տ. Մանուկեան—18 դաս (Հայոց լեզու, հայրենագիտութիւն և երաժշտութիւն.)

5. Ե. Մելիք-Փարսադանեան—12 դաս. (թւաբանութիւն և կրօն.)

6. Գ. Բրուտեան—9 դաս. (նկարչութիւն և կրօն.)

Ուսումնական տարւայ ընթացքում դպրոցը այցելել է և ծանօթացել աշակերտ-աշակերտուհիների յառաջադիմութեան հետ թեմական տեսուչ պ. Թ. Խրմալեանը, որը գտել է, որ դպրոցը յառաջադիմում է և բոլոր դասատուներն էլ համապատասխանում են իրանց կոչմանը։

Ի նկատի ունենալով մի շարք աննպաստ պայմաններ, ինչպիսիք են ա) դպրոցի սաների ծնողների նիւթական անմխիթար դրութիւնը, աշակերտ-աշակերտուհիների դպրոց բերած մտաւոր աղքատ պաշարը, ծնողների անտարբեր վերաբերմունքը, դպրոցի նիւթական սուղ միջոցները, դասարանների աննօրմալ կազմը 45 և աւելի երեխաներ մի դասարանում, ուսումնական պիտոյքների բացակայութիւնը, ուսուցչի երերուն դրութիւնը, նրա նիւթական անմխիթար վիճակը և սրանց նման մի շարք դժուարութիւններ, որոնց հետ հաշտւում է ընդհանրապէս հայ ուսուցչութիւնը և մասնաւորապէս էլ հաշտել է «Խրիմեան» դպրոցի ուսուցչական կազմը և ի մօտոյ ծանօթ լինելով այդ կազմի ուսումնական տարւայ ընթացքում գործ դրած եռանդի, աշխատանքի և տուած արդիւնքի հետ, ազատ կարելի է ասել, որ սոյն ուսումնական տարւայ ուսուցչական կազմի անխտիր բոլոր անդամները տարել են իրանց վրայ դրած պարտականութիւնները բարեխղճօրէն և ցոյց են տուել լաւ արդիւնք։ Տարին անցել է խաղաղ։ Բոլոր դասատուները իրար հետ գործել են համերաշխ և գիտակցել են համերաշխութեան բարձր նշանակութիւնը։ Բացի անմիջական իրանց պարտականութիւններից, ներկայ կազմի անդամները, ի նկատի ունե-

նալով դպրոցի սուղ միջոցները. ձրիաբար արել են ամբողջ ուսումնական տարում վերակացութիւն, կազմակերպել են մանկական ներկայացումներ, դպրոցական հանդէսներ և դրօսանքներ։ Տարւայ ընթացքում դասատուների կողմից բաց թողած չնչին քանակով դասերը և դասերից ուշանալու դէպքերը ունեցել են իրանց յարգելի պատճառները։

Ուսումնական տարւայ մէջ դպրոցը ունեցել է չորս դասարանական հանդէսներ, որտեղ արտասանել են ոտանաւորներ, դրել են մանկական պիէսներ և երգել խմբական երգեր։ Դասարանական հանդէսներին միւս դասարանները նուիրել են իրանց տօնարար ընկերներին մի-մի գեղեցիկ շրջանակի մէջ դրած բնութեան պատկերներ և այդպիսով իւրաքանչիւր դասարանին տարւայ ընթացքում նուիրուել են երեք շքեղ պատկերներ։

Դպրոցը ունեցել է երեք անգամ դասարանական ծնողական ժողովներ։ Այս տարի ծնողական ժողովները կապուել էին յառաջադիմութեան վկայականների բաժանման հետ։ Իւրաքանչիւր եռամսեայ թուանշանները գնելուց անմիջապէս յետոյ հրաւիրում էին դասարանական ծնողական ժողովներ և դասատիարակների միջոցաւ բաժանւում էին ծնողներին իրանց զաւակների յառաջադիմութեան վկայականները։ Բացի դրանից ծնողական ժողովներում դասատիարակները, աւագ ուսուցիչը և ծնողները մարի փոխանակութեամբ աշխատել են ի մօտոյ ծանօթանալ իրանց հսկողութեան տակ մնծացող սերնդի բացասական և դրական կողմերի հետ։

Ուսումնական տարւայ ընթացքում բոլոր բաժանմունքներում եղել են երկու անգամ ստուգումներ։

Փոխադրութիւնները կատարուել են տարեկան թուանշաններով։

Որոշուած էր թողնել նոյն բաժանմունքներում՝

I բաժ. ա) հայոց լեզուից և բ) թուաբանութիւնից.

II բաժ. ա) հայոց լեզուից բ) թուաբանութիւնից գ) կրօնից և ռուսաց լիզուից և դ) կրօնից և թուաբանութիւնից։

III բաժ. ա) մի գլխաւոր և մի երկրորդական առարկաներից (գլխ. առարկաներ հաշուելով հայոց լեզու, ռուսաց լեզու, կրօն և թուաբանութիւն. բ) երեք երկրորդական առարկաներից։

Առաջնորդուելով յիշեալ սկզբունքներով, մանկավարժական ժողովը կայացրեց հետեւեալ որոշումը աշակերտ-աշակերտուհիների փոխադրութեան վերաբերմամբ՝ I դասընթաց բաժանմունքից փոխադրուեցին երկրորդը 33, դպրոցից դուրս եկած համարուեցին 7 և մնացին 9 աշակերտ-աշակերտուհիներ։

I հիմն. բաժ. փոխադրուեցին երկրորդը 26, դպրոցից դուրս եկած համարուեցին 4 և մնացին 3 աշակերտ-աշակերտուհիներ։

II բաժ. փոխադրուեցին երրորդը 31, դպրոցից դուրս եկած համարուեցին 7 և մնացին 11 աշակերտներ։

III բաժնից փոխադրուեցին չորրորդ բաժ. 20, դպրոցից դուրս եկած համարուեցին 8 և մնացին 5 աշակերտներ։

Աշակերտ-աշակերտուհիները ուսումնական տարւայ ընթացքում բացակայել են և առաջին դասից ուշացել մասամբ հիւանդութեան, մասամբ թոշակների, իսկ զգալի մասը ծնողների անտարբերութեան պատճառով։

Մեր ծնողները այնքան քիչ են յաճախում դպրոց և հետաքրքրւում դպրոցական կեանքով, որ նրանցից շատերը կարծում են թէ մինչև օրս էլ դպրոցներում գոյութիւն ունի Տէր Թոդիկեան մեթոդը՝ աշակերտների հետ առանձին-առանձին պարապելը, որ երեխաները երբ էլ դպրոց գան, ուսուցիչները նրանց հետ կպարապին։ Աշակերտ-աշակերտուհիները յաճախ առաջին դասից ուշանում են յատկապէս այն պատճառով, որ ծնողները նոցա

զբաղեցնում են մի որևէ տնային գործով, որպիսիք են՝ միս առնել, ջուր բերել, կաթ ծախել, խանութ գնալ և այլն ու ապա ուղարկում են դպրոց։

Աշակերտ-աշակերտուհիների դպրոց անկանոն յաճախելը և դպրոցից անժամանակ դուրս գալը կարելի է բացատրել և նրանց ծնողների չքաւորութեամբ։ Մեր երեխաների ծնողներից շատ քչերը գտնւում են տնտեսապէս բարւոք դրութեան մէջ. մնացած մասը, եթէ ոչ ծայրաստիճան չքաւորներ (թէև պակաս չեն և այդպիսիները) գոնէ իրանց օրական ապրուստը հազիւ են հայթայթում։ Այդպիսով եթէ ըստ կարողութեան նոցա բաժանենք—լաւ ապրուստ ունեցող, բաւարար ապրուստ ունեցող և չքաւոր, կստանանք՝

1. Լաւ ապրուստ ունեցողներ	34	կամ	22%
2. Բաւարար » »	56	»	35%
3. Չքաւորներ	71	»	43%

Ըստ իրանց պարապմունքների աշակերտ-աշակերտուհիների ծնողները եթէ բաժանենք հողագործների, արհեստաւորների, առևտրականների, բանւորների, ծառայողների և անգործների, կստանանք հետևեալ պատկերը՝

1. Հողագործներ	—22	կամ մօտ	14%
2. Արհեստաւորներ	—53	»	33%
3. Առևտրականներ	—11	»	7%
4. Բանւորներ	—46	»	28%
5. Ծառայողներ	—24	»	15%
6. Անգործներ	—5	»	3%

Ուսուցչական և հոգաբարձական կազմի համերաշխ գործունէութեանը պէտք է վերագրել ուսումնական տարւայ դպրոցի թէ ուսումնականի և թէ տնտեսականի սահուն և արդիւնաւէտ ընթացքը։ Հէնց ուսումնական տարւայ սկզբին շատ հարցեր թէ ուսումնականի և թէ տնտեսականի վերաբերեալ վերջնական լուծումը ստացան

խառն հոգաբարձական և ուսուցչական ժողովներում։ 1911-1912 ուսումնական տարին սկսւեց «Խրիմեան» դպրոցի տնտեսական ամենաանապահով և կրիտիքական ժամանակը. դպրոցը ունէր մօտ երեք հազար ռուբլի պարտք նոր շինութիւնից, նաև չէր վճարել 1910—1911 ուսումնական տարւայ ուսուցչական կազմի 742 ր. 68 կ. ռոճիկը։ Հոգաբարձական և ուսուցչական կազմերը, քաջալերւած անցեալի յաջող փորձերից, չվհատեցին։ Նոքա որոշեցին չխնայել աշխատանք, եռանդ և ազատել դպրոցը այդ նեղ դրութիւնից։ Հոգաբարձական ժողովում կազմւեց 4100 ր. նախահաշիւ 1911=1912 ուսումնական տարւայ համար, որը հաստատեց ծխական ժողովը։ Սակայն հոգաբարձութիւնը դպրոցի աւագ ուսուցիչ Ս. Թաբաղեանի հետ չքաւականացաւ միայն նախահաշիւի շուրջը գործելուց. նա ուսումնական տարւայ ընթացքում միջոցներ գտաւ և դպրոցը ազատեց պարտքից, պահելով միաժամանակ և նրա գոյութիւնը, հաստատւած նախահաշիւի սահմանում։ Այդպիսով 1911—1912 ուսումնական տարւայ ընթացքում «Խրիմեան դպրոցը ունեցել է հետևեալ ելքը՝

1. 1910—1911 ուսումնական տարւայ ուսուցչական կազմի ռոճիկի մնացորդը 742 ր. 68 կ.

2. Ուսուցիչներին և ծառաներին ռոճիկ 1911—1912 ուսումնական տարում 2990 ր. 88 կ.

3. Դպրոցական և աւագ ուսուցչի բնակարանի վարձ 420 ռուբ.

4. Արտաքնոցների մաքրելու նոր շինութեան և դպր. շէնքի 20 ր.

5. Մոնետիկի Ս. Աստւածածնի ցորենի և գարու աճուրդի համար 3 ր.

6. Տպարաններին (հին և նոր պարտք) 55 ր. 90 կ.

7. Ներկարարին-կարկատանների, ճերմակւածքի և այլն դպր. նոր շէնքի և դպրոցական շէնքի 177 ր. 74 կ.

8. Մանր ծախք,—կաւիճ, դոյլեր, բաժակներ, թանաք, գրիչ, փոստի ծախս, թուխթ, հոգեհանգիստներ, ցաւակցական հեռագիրներ 51 ր. 75 կ.

9. Ապակիների թէ նոր շէնքի և թէ դպրոցի վարձ. շէնքի 25 ր. 83 կ.

10. Ծառայի տան վարձ 18 ր.

11. Փայտի, քարածուխի, վառարանների դին, նաֆթի և այլն 79 ր. 91 կ,

12. Ճանապարհածախս գիւղերը ցորեն ժողովելիս և էջմիածին դպրոց. գործով 45 ր. 45 կ.

13. Յակոբ Քեանդարեանին (հին պարտք) 40 ր.

14. Եղբ. Ղասարեաններին (հին պարտք) 31 ր. 63 կ.

15. Գրքերի (տիկին Կոստանեանի նուիրածը) 50 ր.

16. Գ. Ստամբոլցեանին (հին պարտք) նոր շէնքի համար տուած եբկաթեղ. 150 ր.

17. Դպրոցական ֆօնդին 10 ր. 15 կ.

18. Ծառայ Կ.Մխիթարեանին (հին պար.) 13 ր. 57 կ.

19. Բոյեախչեանին և Զատիկեանին (հին պարտք) 1435 ր. 90 կ.

20. Ծաղիկեանին (հին պարտք(300 ր.

21. Աղաբաբեանին (հին պարտք) 117 ր. 83 կ.

22. Սահակ Սահակեանին (պէչնիկ հին պարտք) 18 բուբ.

23. Ս. Աստուածածնի արմտեղէնի և անասնեղէնի ժողովելու և խորանը մաքրելու 43 ր. 50 կ.

24. Դպրոցի նոր շէնքի արքունական հարկի I կիսամեակը 29 ր. 25 կ.

Ընդամենը 6870 ր. 97 կ.

Ելքը ծածկւած է հետեւեալ եկամտային աղբիւրներով՝

1. Նոր շինութեան վարձ սկսած 1911 թ. յունուարի մէկից մինչև 1912 թ. սեպտեմբերի մէկը 2500 ր.

2. Ս. Աստուածածնի խորանից 1911—1912 ուս. տար. 1461 ր. 28 կ.

3. Ս. Աստուածածնի պատկերին նուիրած անասնեղէնի և արմտեղէնի վաճառ. 1911 թ. 893 ր. 19 կ.

4. 1911—1912 ուս. տար. աշակերտ-աշակերտուհիներից թոշակագրամ 848 ր.

5. Պատուաւոր հոգաբարձուներից և զանազան նուիրատուներից 1168 ր. 50 կ.

Ընդամենը 6870 ր. 97 կ.

Հինգերորդ համարով ցոյց տուած 1168 ր. 50 կ. ժողոված է հետեւեալ բարերար անձնաւորութիւններից և հիմնարկութիւններից՝

1. Պատուաւոր հոգաբարձուներ վճարել են 1911-1912 ուս. տարայ վճարները՝ Պ. պ. Բ. Դրամբեանը 50 ր., Յ. Խալաթեանը 2 տարւայ վճար—40-ական ր.—80 ր., Ե. Սէյլանեանը 2 տարւայ վճար—25-ական ր.—50 ր., Գ. և Մ. Յակոբեանները 20 ր., Հ. Տէր-Ղազարեանը 25 ր., Գ. Տէր-Պետրոսեան 25 ր, տիկին Ե. Մարուբեանը 15 ր., Մ. Ծատուրեանը 10 ր., Ս. Արոյեանը 10 ր., և Աղ. Ամիրեան 7 ռուբլի.,

5—ական ռուբլի վճարել են՝ Պ. պ. Գ. Աղաբաբեանը, Հ. Մհտ. Պօղոսեանը, Գ. Վարդիկեանը, եղբ Մ. և Վ. Երանոսեանները, Յ. Տէր-Մարտիրոսեանը, Ա. Համբարձումեանը, Ս. Բայբուրցեանը, եղբ. Գասպարեանները, Ն. Կիրակոսեանը, Ա. Իսահակեանը, Պ. Գիօնջեանը. Մ. Աղաբալեանը. Հ. Ժամակոչեանը, Մ. Կանեցեանը. Ա. Գառգալոյեանը, Մ. Գառգալոյեանը. Խ. Դալալեանը, Ա. Կրիտեանը, Ա. Տայեան Ս. Զախմախչեանը, Յ. Ճէկոյեան, Գ. Շէկոյեանը, Կ. Ջանլաթեանը, Գ. Մատոյեանը, Լ. Սրապեանը, Յ. Էհրամճեանը, Մ. Խզմալեանը. Յ. Սանոյեանը, Ալ. Ճինանեանը. Արշ. Ճինանեան, Յ. Խոյեցեացը, Ա. Նալեանը, Գ. Տէր-Մարտիրոսեանը, Գ. Տէր-Մինասեանը, Յ. Բարսամեանը, Ա. Տիգրանեանը, Յ. Քեանդարեանը, Ա. Մալխասեանը, Յ. Սանոյեանը, Հ. Տէր-Պետրոսեանը,

Գ. Տաթեւեանը. Կ. Ափինեանը, Գ. Սեոյեանը, Մ. Շամցեանը, Հ. Խոյեցեանը, Վ. Արարաջեանը, եղբ. Զատիկեանները։ Նուիրել են միանուագ՝ մանր վարկի ընկերութիւնը 300 ր. Բ. Տնկոզեանը իր հօր յիշատակին 50 ր., տիկ. Տիրուհի Կոստանեանը հանգուցեալ Յովհաննէս Տէր-Մարտիրոսեանի յիշատակին մանկ. գրադ. 50 ր., եղբ. Վ. և Թ. Զատիկեանները 35 ր., Վ. Մանուկեանը 20 ր., տիկին Ղոզակաթ և Օր. Հրանոյշ Մինասեանները, հանգուցեալ Արզար Մինասեանցի յիշատակին 25 ր., Վ. Բարսամեանը իր մօր յիշատակին 25 ր., — տ. Ե. Ղարիբեանը իր ամուսնու յիշատակին 10 ր. Վասիլ Ղանթարճեանը իր մօր յիշատակին 10 ր.։ 5-ական բուբլի նուիրել են՝ Պ. պ. Գ. Վարդապետեանը, Տ. Յարութիւնեանը, Ա. Ծառուկեանը, և Ա. Իսահակեանը։ 3-ական բուբլի Տ. Բոյախչեանը, Գ. Իսահակեանը, Մ. Ափոյեանցը, Գ. Խաժակնեանը Մ. Մազմանեանը, Ա. Տէր-Աւագեանը, Ե. Յակովբեանը, Ա. Բարայեանը, Վ. Կարանեանը, Տ. Տիգրանեանը, Գ. Ղիլաճեանը, Ս. Կնեազչեանը, Հ. Տէր-Յովհաննիսեանցը։ 2-ական բուբլի — Բ. Բունաթեանը, Հ. Իսպիրեանը, Ա. Կոստանեանը, Ս. Մեհրիեանը, Ս. Ժամակոչեանը, Գ. Բէկլարեանը, Ա. Զաքարեանը, Կ. Աղաջանեանը, Մ. Պերկելեանը, Կ. Խուրդայեանը, №№, Եղբ. Յակովբեանները, (Փալտրվանցեանները), Գ. Միրզայեանը, Եղբ. Ալանակեանները, Յ. Միքայէլեանը, Ե. Միքայէլեանը։ 1-ական բուբլի — Ս. Ղուլումչեանը, Ս. Խուրդայեանը, Խ. Բուխարացեանը, Գ. Փափանեանը, Գ. Կարապետեանը, Եղբ. Զոլախեանները, Ա. Կորկոտեանը. Մ. Յակովբեանը, Մ. Աթոյեանը, Գ. Յարութիւնեանը, Ա. Յովհաննիսեանը, Կ. Մխիթարեանը, Վ. Բիչախչեանը, Յ. Վարդանեանը, Մ. Սարգսեանը, մի ոմն, Յ. Եգանեանը, Մ. Զարխչեանը, Իգնատիոսը, Մ. Գափոյեանը, Ա. Մալխասեանը Ա. Մինասեանը Ա. Միքայէլեանը (Յովհաննիսեանը), Յ. Տէր-Զաքարեանը։ 50-ական կոպ. Մազմանեանը, Յ. Կիւրեղեանը և Մհտ. Ոսկանեանը։

Պատուաւոր հոգաբարձուներ պ. Բ. Դրամբեանի 50 բուբլով թոշակից ազատւում են 5 աշակերտներ. իսկ տիկին Ե. Մարուքեանի 15 ր.— մէկ աշակերտուհի։ Դպրոցում բացի յիշեալ բարերարներից, որդեգիրներ պահում են Պ. պ. Աշոտ Կարանեանը — 2 աշ. տալիս է շորեր, ուսման պիտոյքներ և թոշակ 16 ր. Ս. Սահակեանը 3 աշ. թոշակ — 22 ր., Բ. Տնկոզեանը — 1 աշ. տալիս է շորեր, ուսման պիտոյքներ և թոշակ 8 ր., Եղբ. Ամիրջանեանները — 2 աշ. տալիս են շորեր, ուսման պիտոյքներ և թոշակ 16 ր.։ Դպրոցիս բարերարների շարքին են պատկանում նաև Պ. պ. 1) Խաչ. Իսակեանը 2) Յ. Քեանդարեանը, 2) Մ և Գ. Ստամբոլցեանները, 4) Հ. Ծազիկեանը, 5) Եղբ. Ղասարեանները, 6) Յակ. Ղասարեանը և 7) Մ. Վահրամեանը, որոնք ի նկատի ունենալով դպրոցի սուղ միջոցները պարտքերից զիջեցին՝ առաջինը — 65 ր. 50 կ. երկրորդը — 25 ր. 50 կ., երրորդը — 30 ր., չորրորդը — 413 ր., հինգերորդը — 30 ր., վեցերորդը — 5 ր. և եօթերորդը — 5 ր.։

«Խրիմեան» դպրոցի 1911—1912 ուսումնական տարւայ բերած այդքան առատ նուիրաբերութիւնը անշուշտ գրաւական է հասարակութեան դէպի դպրոցը ունեցած սիրալիր և բարեացակամ վերաբերմունքին։ Որ Աղէքսանդրապոլի հասարակութիւնը սիրում է դպրոց և չի խնայում իր կոպէկները ընդհանրապէս երեխայի կրթութեան համար, դորան պերճախօս փաստ կարող է ծառայել «Խրիմեան» դպրոցը իր եօթ տարւայ գոյութեամբ, ունենալով եկամտային հաստատական ազբիւր Ս. Աստուածածնի պատկերի արդիւնքի $^2/_3$ մասը, միջին թւով տարեկան 1500 ր. «Խրիմեան» դպրոցը ծախսել է դպրոցի գոյութիւնը պաշտպանելու համար, տարեկան միջին թւով 4500 ր. բացի դորանից, նա յիշեալ ժամանակամիջոցում

շինել է դպրոցի համար մի շքեղ շինութիւն, որը արժէ մօտաւորապէս տասն և հինգ հազար ռուբլի և այսօր այդ բոլորից յետոյ դպրոցը ազատ է պարտքերից, բացի Հաւինոյ Վանքի գումարներից, տարիներ առաջ վերցրած, չորս հարիւր ռուբլուց (400 ռ.) որպէսի գումարը հաւանօրէն կվճարուի 1912—1913 ուսումնական տարում։

Քաջալերուած եօթ տարուայ փառաւոր անցեալով, դպրոցի ներկայ միջոցական վիճակով, «Խրիմեան» դպրոցի Վարչութիւնը այս ուսումնական տարում բացել է IV դասարանը և շարունակում է գործը նոյն եռանդով, լիայոյս լինելով, որ բանիմաց քաղաքացիները իրանց առատաձեռն նուիրաբերութեամբ կպաշտպանեն դպրոցի գոյութիւնը և ժամանակի ընթացքում հնարաւորութիւն կտան դպրոցին զետեղուելու իր սեփական շինութեան մէջ, որը ներկայիս միջոցների սղութեան պատճառով տրուած է վարձով դինուորական վարչութեանը։

Կազմեց «Խրիմեան» դպրոցի
աւագ ուսուցիչ Ս. Թաքաղեան

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека
7/XI 1922
Ս. ՄՅԱՍ Ի ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

20 Սեպտեմբերի 1912 թ.
Ալէքսանդրապոլ։

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՅԿԱՅԻՆ
Հ. Հ.
ՀՍՍՀ ԱԿԱԴ.

«Ազգային գրադարան»
NL0229742

50. 322